

թէ որ զիս մեռցընելու ըլլաք նէ . ես հարկաւոր թղթեր ունիմ որ իմ ձեռքովս թագաւորին ձեռքը պիտի հասցընեմ . մօտիկի գեղն ալ չորս ծառայ ունիմ որ ինծի կը սպասեն . իմ մահս ծածուկ չմնար , դուք ալ հարկաւ պատիժնիդ կը քաշէք : Ի ացէք գուռար , ես ալ կը խոստանամ որ մարդու բան ըսեմ . անկէ զատ Ա իլլառի անուանը արժանաւոր պարգև ալ կուտամ ձեզի „ : Ա նոնք քիչ մը ատեն ալ խորհուրդընելէն մտմտալէն ետե կ'որոշեն որ արձրկեն զինքը , բայց առաջ երդուընցընեն որ ամենեին դուրս չհանէ բանը . հապա միայն այսչափ ըսէ թէ սարսափելի բաներ տեսեր ու լսեր է ան բերդին մէջ . որ իրաւ էր : Ա սանկով կ'ազատի բերդէն կ'երթայ :

Ա տեն անցնելէն ետքը օր մը Ա իլլառ քանի մը բարեկամներով իր գեղի տունը կեցած ժամանակը , յանկարծակի անծանօթ մարդ մը կուգայ առջեր կ'ելլէ , հետն ալ երկու հատ գեղեցիկ ու կրակոտ ձիեր . “ Ա սձիերը հրամանոցդ ընծայ կը խրկեն կ'ըսէ ան մարդիկն որ բերդին մէջ երդուընցար անոնց բանը դուրս չհանելու , ու երդմանդ վրայ կեցար . հիմա ազատ ես երդմունքէդ , վասն զի իրենք ան երկրին սահմանէն դուրս ելան ազատեցան , բանի մը կարօտ չեն , մէկէ մըն ալ վախ չունին „ :

Ա ստենը Ա իլլառ կը պատմէ քովիններուն իր գլխուն եկածը : Ա նինդ սատանաները հինդ հատ սատանայ մարդիկ են եղեր որ ուրիշներու հետ մէկտեղ ան բերդին մէջ սուտ ստակ կը կոխեն եղեր . իսկ ան բացուած յատակը ան որոգայթներէն մէկն էր որ հին ատենը յւրոպայի զանազան բռնաւորներուն իրարու հետ պատերազմելու ատենը՝ գրեթէ ամէն բերդերու մէջ կային : Ա իլլառ դուքսը ամէն անգամ աս պատմութիւնը պատմելէն ետե չմոռնար եղեր վար զարնելու իրեն չափազանց համարձակութիւնը , ու կ'ըսէ եղեր թէ անխոհեմ քաջութեան ինչ վը-

առնդներու մէջ ձգելը իմքաշած փորձանքէ” թող սորվին կտրիճները :

(ՍՈՅԱԿ :

ԴԱՍՏԱՄԱԿՈՒԹԻՒՆ

Դարուապանք ’է Ռարերարս , ’է Աստաբու և ’է Հետեռղն իմաստաւել Ա ցուի Հայտանեայց :

Բ.

Ա ն են փառք և երախտիք որոցնախապատճառք եղեն բարգաւաճանաց ուսման յազգս իւրաքանչիւր . այլ ոչ ինչ նուազ և այնոցիկ է՝ յորոց ’ի ձեռս աճումնն մատակարարիցի : Օ որ օրինակ տնկագործն յարկանելանդ զսերմն կամ զբոյս՝ նախահայր պտղոցն եղեւ , սակայն պտուղու արձակի եթէ և այլ ոք չարբուացէ նմա ըզջուրն կենսատու , այսպէս և բարերարաց մերոց զտունկն տնկեալ , աճեցուցանել և արգասաւոր զայն առնել յանձնեցին ’ի խնամն ձեր , ով վերակացուք իմաստասիրական կայից ’ի Հայս , վարժապետքդ և դաստիարակը հայակոյտ մանկուոյ : Ա բքան մեծի գործոյ աւանդառուք եղէք և պարտականք . կամ յարգելով զբարին որոյ ոստիկան կայք՝ ընդ բուն բարերարսն դասիլ և յ Ա ստուծոյ գովիլ և ’ի մարդկանէ . կամ վայրապար և ոչ ուղղութեամբ պաշտեալ զբործդ , և ’ի բարերարացն և յազգին և յ Ա ստուծոյ աչաց ելանել :

Չիք ինչ մեծ և աղնիւ քան զենութիւն պաշտամանդ . քանզի եթէ քան զլոյս առաւել է իմաստութիւն , ապա քան զակն լուսոյն առաւելագոյն իմն պահանջի ’ի դաստիարակն որ զիմաստութիւն ուսուցանէ . և եթէ ամենեին յստակ է իմաստութիւն ,

քանի՞ սրբութիւնյամանոյն պահան-
ջի յոր նայն ագանիցի . եթէ զուղիղ
ազգասիրութեանն ոգի արծարծա-
նել պարտք են նորա , քանի՞ հրատք
սուրբք նորին սիրոյ ոչ ինդըիցին՝ ի
նմանէ . և եթէ զմիտու և զսիրտ հա-
մանգամայն ուղղել մնայ նմա , քանի՞
զօրութեան և ուղղութեան պէտք ի-
ցեն նմա : Օ ի ընդ բռնագունին քան
զբնաւս արդարե մնայ ձեզ կուուել
ընդ վայրահակ բնութե , և ընդ “ Առ
” վորութեան՝ որ յամունն ’ի բարս
” գտեալ’ի բնութե անկանի կարգ ” .
զգետոյն անարւոյ ընդ որ կեանք ա-
շակերտացդ ընթանան՝ բազում ան-
գամ պահանջնիցիք փոխել զընթացս,
և ընդ հուն նոր խաղացուցանել կա-
տարեալ իմաստութեամբն , որ է կըր-
թութիւն մտաց և հոգւոյ :

Աչ ոք յարդարակորով մարդկանէ
ստգիւտ շփիցէ զինե որպէս թէ զուս
մանց հրահանգս ընդ բարուցն կըր-
թութեան շփոթեալ . քանզի և ձը-
մարտիցն և խոհական մերոյ բարերա-
րաց ոչ այնքան վարկապարազի մտացն
զարդու ուշ կալեալ էր՝ որքան ներքին
մարդոյն զգեստաւորութեան ան-
տիւղծ իմաստութեամբ , որ զկիրթս
հոգւոյ ընդ մտացն անմեկին ունի .
և բաժանել զերկուս զայս այնոցիկ
միայն գիտէ շնորհ՝ որք զհոգին՝ ի
մարմնոյ բաժանեն , մանաւանդ թէ
չարաչար զհոգին լը մարմին շաղեալ
զանգանեն , ուր իմաստութեան էր և
զմարմին՝ ի հոգւոյն հանել սրբութի :
Հարուած ահաւոր ազանց և աշխար-
հաց , հարուած՝ առ որով եթերացայտ
փայլատականց շանթիք՝ ասղան հա-
րուած չիցեն , և լեռնացեալ ալիք
ովկիանու կաթիլ մի ջրոյ . հարուած
սոսկալի երեսդարձութեան երկնից՝
դաստիարակք և վարժապետք ինք-
նին են , որոց միայն՝ ի սեթեեթեալ
գիտութիւնս զմանկութիւն մարդ-
կութեանս պարապեցուցեալ զայլովն
ամենայնիւ զանց առնիցեն , զհո-
գւոյն ասեմ կըթութեամբ : Օվա-
զերս յանտառաց հրաւիրել լեռնա-

նմանլւիաթ անաց ասպարէ զկարդալ,
զբոնաւորս յարիւնանիշ շիրմացն զար.
թուցանել՝ բարի է յոյժ , քանի յաթոռ
տիրական բազմեցուցանել զանարժան
վարժապետ , ընդ արիւնահեղս հա-
մարեալ , ըստ Ա ագիստրոսի բանին ,
մարդադէմ գազան հոգեմարտ . քան-
զի նոցա ժանիք և երկաթ ’ի մարմնի
առնուն սահման , սոցայս անդրա-
գոյն քան զմահ անթժկական վիրօք
’ի յաւերժ մեռելութիւն զհոգին յու-
զարկեն :

Աչ ինչ պակաս ’ի կենսատու ծնո-
զաց՝ անկ է դաստիարակացն լինել
հոգւոց և մտաց վերածնողս . նա և
առաւելիսկ . դաստիարակին պարտ և
պատշաճ է համօրէն դաստիարակու-
թիւն իմն լինել կամ իմաստութիւն
անձնաւոր . արժան է նմա զիմաս-
տութիւն աղերաբար բղխել ’ի լե-
զուէ և ’ի շրթանց , յաշացն հայելոց
և յոտիցն գնալոց , ’ի ձիգս ձեռին և
’ի գելս ձակատուն , և ’ի կերպարանսն
համօրէն :

Լ այլ զի՞նչ խօսիմս . անձամբ զանձն
իմ դատապարտ առնիցեմ , որ գի-
տեմ զոր պահանջիմս և զոր չունիմ .
ո՞հ , եթէ պարտ իցէ յայսքան պատ-
կառելի ատենէ շթագուցանել զըն-
մարտութիւն , ինձ արդարե արժան
էր հրաժարել նախ յաթուոյ աստի ,
ապա թէ այլոցն լինել աղդարար , ե-
թէ ոչ էր հնազանդութեան սրբոց
հրամանաց շքոյն գլխոյ իմոյ՝ վարա-
գուրեեալ զանբաւականութեալ , և հզօ-
րացդ առաքինեաց ձեռն և խրախոյս
տուեալբանիւ և գործով . սակայն եր-
կիւղն ազգեցեալ ստիպէ զիս բարբա-
ռել աստանօր՝ ի լուր ամենեցուն որոց
կան յաւուր յայսմիկ՝ ի գլուխ հայա-
ստան մանկանց . յիշեցուցանել հարցա-
նել զնոսսա , թէ պատրաստք իցեն
նութիրել զամենայն զօրութիւն ան-
ձանց ուղիղ մուօք առաջի լ ստուծոյ
յօդուտ ազգին իւրեանց . առնուցո՞ւն
յանձն զկորուստ գիւրի և ժամանա-
կի առ՝ ի գիւտ այնքան ժամանակաց
և գիւրութեանց՝ որքան աշակերտացն

են կեանք, և ակնկալութիւն ազգիս .
յօժարք իցեն յանխառն և յաննա-
խանձ աղբերէ սրտից հոսել ընդ ա-
ռուս համբակաց 'ի ծոցս Հայաստա-
նեայց, և թէ էր ինչ 'ի ներքս պղտոր
կամ տտիպ ընդ խիճս խղջին զտել
կամ ընդաւազել, զի մի արդեօք
դառնութեան ումեք հասցէ և ձա-
շակ և մահ . քանզի բազում քաղաքք
անառիկք 'ի սրոյ և 'ի սովէ՝ աղբերա-
կանցն որ զնոքօք անցանէին դեղե-
լով՝ 'ի սպառ սատակեցան . ո՞չ, մի
թողէ ինամողն, զոր սոսկամն և ընդ
միտս բնաւ ածել, եթէ գուցէ տուն
Ծարդումայ որ այնքան վտանգաց տա-
րաւյար յերերի՝ այլ միշտ անկործան,
'ի դեղեալ իմաստութենէ այտի զմահ
ջեռեալ առոյգ տեսլեամբն դիտա-
պաստ անկցի :

Ո՞ի ծանր թուեացին ձեզ բանքս
թէպէտ և ահաւորք . օրինակք առա-
ջի կան մեր յշւրոպա՝ որում 'ի գո-
վելիսն ջանամք նմանել . քաջ իսկ
քննեսցուք զնա, զի մի գայթակղու-
թեան մեզ եղեալ քար՝ փոխանակ շի-
նութեան առ նովաւ գթիցեմք : Ե-
հա համալսարանք գերապանձք և
համբակք լրացեալք վարժիւք, և յաղ
թանակաւ իսկ պսակեալք . այլ ե-
րանի թէ բնաւ և չէր իսկ մտեալ
նոցա ընդ դպրոցին դուռն . երանի
թէ ընդ պարզամիտ խուժանին շփո-
թէին բաղդիւն, այլ ոչ հոգւովքն ը-
շարախուժ գիւաց . բաժակ գեղեցիկ
թուին նոքա լի ամենայն զզուանօք,
քան զարտաքին երևոյթն և զպսակսն
ինչ չունելով աւելի 'ի բարեաց . յոր
եթէ մօտ մատցիցիս, ժահք ապակա-
նեալ վարուց անարգել արբանեկու-
թեամբ կրից՝ ընդ ուղիղսդ բախիցին,
հոտ մահուն աստուածանդիտութե
զսիրտ հարկանիցէ, և ընդ մեզու օ-
րինակաւ թոյն ամենագառն սփռիցի :
Ուստի բազմութիւ ապիրատաց մարդ-
կան ընդ որոց հեծեծելով բողոքեն և
եկեղեցիք և քաղաքական կեանք և
ամենայն մարդ մտացի, 'ի դարուս՝
յորում հասարակեալ են դիտութիք

քան բնաւ երբէք . ոչ այնչափ առ
տգիտութեան, որչափ առ տգիտա-
բարն գիտութեան, առ անփութու-
թեան և ապականութեան դաստիա-
րակայն . զի զորս և առ պատուան-
գանս ոտից չէր արժան ունել, նոքա ա-
ւանիկ բազում անդամ յաստուածա-
պատիւ աթուս կերածայրեալ տե-
սանին . զմատնն ժպիրհ ընդ երկնա-
ւոր Ճանապարհս յաստուածակոխս խո-
րանսն կարկառեն, որոց գարշապարք
'ի գեհենազարդ պողոտայս Ճարտար
քան զգես կայթս հարկանեն . ա-
ռաջք նոցա դրախտ փափկութեան և
վերջք նոցին աւերածք մահու . նոքա
են կետքն քաղցրաշունք զորոց երա-
նաշնորհս մեր հայր Ճառէ ՈՒխիթար,
թէ 'ի բերանս նոցա դիմեն ձկունք
պատրեալք 'ի հոտոյն, և յանպուրծ ար-
դելանին տուայտին . փարելիս բար-
բառին զարդարութենէ, զհաւասա-
րութենէ, զկրօնից և զիմաստասի-
րութենէ, և զամենայնի զայնր զջը-
մարիտ սկզբունս եղծանեն 'ի սրտի .
“ Կակուզ են բանք նոցա քան զձէթ
,, և ինքեանք որպէս սլաք . . . Փա-
խերմւք հայրենիք իմ, փախերուք ման-
կունք Ծարդումայ յայդպիսեաց ու-
սուցչաց, զի մի վարձ աշակերտութե-
ներոյ հոգիք ձեր լինիցին . պնդեա
զմէջսքո Հայաստան, թէ առ, թոփր
վերացիր, երկիր, թաղիր յանապատաս,
զի ահա 'ի քո իսկ սահմանս ոտնկուիւ
լինի չարն . ատղախտ լիցին 'ի քէն ա-
մենեքին որք ոչ լցին զսափորս բանին
իւրեանց յանապակ իմաստութեն աղ-
բերէն որ ընդ ծորանս խաղայ սրբոց
կրօնից և վարուց : “ Եկենցազումն այս
դուզնաքեայ երկիցս այս պատուելի
է, նախ հաւատ, երկրորդ իմաստու-
թիւն . և են սոքա 'ի մերձակայումն
զրոլոր բարիս պարունակեալ, և յա-
պաւնիսն առ հաւատչեայ . . . :

Այս, եղբարք, աւանց սկզբանց ան-
խարդախ վարդապետութեան կրօնից
և զգօն վարուց՝ չիք կատարեալդաս-

ախարակութիւն, զիք իմաստութիւն, չիք ճշմարտիւ օգտել Հայրաստանեայց, այլ ամենայն ինչ թերի է և վայրապար ջան, խաթկանք ևեթ: Ակիզբն իմաստութեն երկիւղ տեառն է, չասաց վայրապար բերանն իմաստութեան: առանց սորա 'ի զուր են ամենայն ջանք ձեր, ո՞ որ նկրտիքդ բարեկիրթ զազգս առնել, ազնուացուցնել զբնութիւն մարդոյս, վայել 'ի շնորհս բանին մտաց: 'ի զուր են համալսարանքդ և նախաթոռք կրթարանաց ձերոց: սուտ պարծին փիլիսոփայքդ՝ որ լուսով բանին իւրեանց ասեն առաջնորդել մարդկութեան: երկիւղ տեառն է կարապետ մտաց, և ոչ կեղծուապատիր մարդասիրութիւնք, մորոսական մագնիսութիւնք, գանկախոյզ խորագիմայութիւնք: ոչ, ոչ ձեմք ներշրջանակաց, ոչ աստեղաց հետազօտութիւնք, ոչ պապաջիւնք լեզուաց և մարմաջիւնք ակնջաց յերգս թատերաց, ոչ ինքնահաճ քննութիւնք տարերաց, այսոքիկ ամենայն ոչ առնեն զմարդ իմաստուն՝ որպէս անսունս այս նշանակիցէ: Հարցէք դարձեալ զինողումն զայրն անսուտ որ զամենայն կիրսյանձին եթեր, և զամենայն կարծեցեալ իմաստութիս փորձեաց գտակաւ, և մանր կըուեալ եգիտ զի Հյու այն ընդունայնութիւն է և անմտութի ։ զի իմաստութիւն երկիւղին Եպուուծոյ վերացելոյ ոչ ևս է իմաստութիւն, և զայս վկայէ կատարածի բանիւն: ՀՅԱստուծոյ երկիր, զի այս է մարդն ամենեին ։

Ա ասն որոյ հիմն զաստուածպաշտութիւն եղեալ 'ի միտս և 'ի սիրտս մանկուոյն, և զարդարութիւն ընդմարդկան, զայլ ամենայն գիտութիւնսն ածջիք զնավաւ: ուսուսջիք նոցա զի նա միայն առաջնորդէ մարդոյս 'ի կատարեալ կեանս: ուսուսջիք զի հայրենիք մեր արանց լաւաց և ողջամտաց կարօտ են: զի ուղղութիւն սրտի առ Եպուած և առ ընկերն կանգնէ զանձն և զաշխարհ: զի Հյու

, Հոգին իմաստութեան փախիցէ 'ի նենգութենէ ։ զի առ ճշմարիտ ազգին օդուա և գթութեանն Եպուուծոյ հանդիսումն՝ 'ի բաց մերկանալ պիտի զամենայն նախանձ և զատելութիւն և զկանխակալ կարծիս, և զանձնափիրութիւն՝ շահուուն հանգերձ տենչանօք, որ հասարակաց կիրք են մարդկութեանս: և յանձանց զայսր ամենայնի ընծայեսջիք զօրինակ, զի հազար բան խրատու չարժէ առ տասն յանդիմանութիւն գործոյ: Հյուցէք նոցա զՃանապարհս զոր կոխեցին աշակերտք Եպուուլպայ և Ահակայ և Երսիսի, զորոց զաթուուն ունիք: առողջագունից իմաստից սրողս արարէք զնոսա որպէս հարքն մեր: անպատրուակ, այլ զգուշութիք և գթով մերկացարուք նոցա զցաւս հայրենեաց մերոց, և զփափուկ սիրտսն 'ի գութ նորին շարժեսջիք, որպէս զի տածիչք և խնամողք նմին լիցին առյալայս: Ինդարձակեցէք եթէ հընար է զասպարէզ զոր իմաստութեանն Իարերարք բացին: կամ թէ ոչ անխոտոր ընդ նոցա ցուցեալ շաւիղան երթայք հաւատարմութեամբ:

Ակայս բազում ջանս և երկունս պահանջիցիք 'ի բանիդ, և ո՞ ոչ գիտիցէ: այլ կենդանի է տէր, զի և ոչ զկայլակաւ քրտամբդ հեղլով չարասցէ ապախտ 'ի հատուցմանն աւուր: Եյլթերևս ոչ որչափ կամէիքն քաջառուք գտան համբակքդ: այլ մի հարջիք 'ի խորհուրդս ձեր, զի և ասաւել քան զոր եինն՝ եղեն ջանիւք ձերովք, և առաւել քաղցրացան երկինք հայել 'ի մեզ: Եյլ և ոսոխք ոմանք արգեօք չարանախանձք յաշաղկոտք զզուիցեն զձեզ և կրծիմն բարւոյն կամիցին արկանել: համայն զանդիտեսջիք մի: զի ցեղը ժուժայցէ չարն բարւոյն կալ հակաւակ: և կամ քըն Եպուուծոյ որ փորձել զձեզ նոքօք կամիցին՝ կրկին առաւելացուն ըզվարձս հաւատարմութեան ձերոյ, և վասն այնորիկ իսկ թերևս զգաստացուցեն զմոլորեալսն, եթէ գուցեն

բնաւ այնպիսիք ումանք յայսպիսում դարու, որք լուսոյն թիկնադարձոյցք՝ զերեսս 'ի խաւարն հաստատիցեն, և յանդաստանս հացաւէտս որոննացանք լինիցին . և գարձեալ ընդդէմ Գրիգորի, Եերախսի, Աահակայ, Ա արդանայ, Ա ահանայ, Գագկայ և իջորսի 'ի լեր երեկոցին ։ Արձան և Ուշրուժան և Ծրբից և Ա ասակ և Գարջոյլ և Ա եստ Աարդիս և Ուշէ : Ի յլ ոչ, Հայաստան այսուհետեւ ոչ ծնցի որդիս այսպիսիս, որք ոչ թէ հայկականին՝ այլ և ոչ գաբաւնացւցն արժանիք են որդեգրութեան . որք զառ 'ի լերանց և 'ի ձորոց ժողովեալս բազում տաժանմամբ զոշխարակս 'ի հօտ քրիստոսեան՝ չարագունից ձգնիցին մատնել քարակարկառ վախից և գահավիժութեց, և զհոգիս գողացեալ 'ի մարզարանէն՝ անշուշտ 'ի դիւանս դժոխոց գիցեն 'ի պահեստ յաւիտեանց : Ի յլ մանաւանդ զկորուսելցն զհետ պնդեալ, և ձայն աղիողորմ հայրական կույզ ածեալ, զվարատեալսն ինքեանց ձեռօք մուծցեն ընդ լուսաւոր դրունս իմաստութեան, և ընդ հովուին ձշմարտիցնացյեն ընդ գիւտ միոյ գաւին՝ յայն խորանս, ուր ընդ գերաբնիցն կաճառացեալ համօրէն բարերարաց և սատարողաց իմաստասիրութեան ազգիս, որպէս զարեգակունս ումանս հարստեալք կայցեն, շուրջանակի լուսաւորս յառատութենէ իւրեանց ձահանշից ձեմեցուցանելով զդասս համբակացն հրճուղական պարուք, որպէս գնայունք աստեղաց զարփային գնտովս, որհնելով ընդ լուսոյ իմաստութեան նոցա զաղբիւրն իսկաբուլս զիմաստութիւնն յաւիտենական :

Ի յլ առ հրաշալին վերաժամանել որպիսիս այժմէն անկ իցէ և ձեզ լինել, ո՛ հետեւողքդ իմաստութեան, մանկունք Հայաստանեայց :

(ԱԿԱՐՑՆ ԱՍՏՐՃԱԿԱՑՄՆ :)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵՎԱՌՈՒԹԻՒՆ

Տէ՛լերէվ ուսու բանաստեղծ :

Հին ատենը շատ կը գտնուեին այնպիսի զօրաւոր մտքով ու ընդարձակ սւտով մարդիկ որ զէնքն ու գրիչը հաւասար քաջութեամբ կը շարժէին . ու մեր ազգին մէջ ալ յայտնի օրինակ ունինք մեզի աս բանիս կողմէնէ Գրիգոր Աագիստրոսը : Ի այց ետքի գարերուս մէջ խիստ քիչ երեցած են այսպիսի մարդիկ . անոր համար աւելի ալ պատիւ ու յարդ ունին : Ի սոնցմէ մէկն է Յովհաննէս Տմիթրիկվ ուուս բանաստեղծը . որ 1760^ն ծնած էր Խաղանի կողմերը, ու զինուորականն և քաղաքական մեծամեծ պաշտօններու մէջ շուտ շուտ առաջ գնաց ու ամէն կողմանէ փառաւորուեցաւ . և սակայն ուսումնականութիւնն ու բանաստեղծութիւնն ալ ձեռքէ չձըդելէն զատ՝ նաև իր ազգին առաջին բանաստեղծներուն կարգը անցաւ իրաւամբք : Ը ատ տեսակ մանր բանաստեղծութիւններ ունի . այսինքն առակներ, պատմութիւններ, երգեր, տաղեր և այլն . և սոնց մէջ գեղեցիկներէն մէկն է Երմակ ըսուած գիւցազնական տաղը, որ հոս հայերէն կը թարգմանենք հաւատարմութեամբ, ու յանդի կատարելութիւնը՝ թարգմանութեան ձըդութեանը կը զոհենք : Խակ աս Երմակ կամ Երմաք անունով քաջ մարդը՝ Տոնսքի ըսուած խաղախներուն աթամանը՝ այսինքն զօրապետն էր, որ 1580^ն 6000 հոգւով գնաց Աեպէր կամ Աեպէրի ըսուած ընդարձակ երկին տիրեց, ու ետքը Պաւսաց Խւան Դաթաւորին ընծայեց : Երեք տարի ետքը Պաւարաց իշխաններէն մէկը դարան դրաւ իրեն ու մեռցուց :